ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ3

,,ՇՀԱՊՁԲ-15/16–ՄՊԱԿ -16/3,, ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ, Մեծ Պարնի 14.03.2016թիվ
ժամը15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Լամբարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաբայան
Շ. Յաղուբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Լամբարյան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի ՄՊԱԿ-ի կենտրոնական մասնաշենքում 14,03,2016 թվին ժամը 15:00-ին:

Նախագահ Մ, Լամբարյանը հայտարարեց,որ ստացվել է ,,ՇՀԱՊՁԲ-15/16–ՄՊԱԿ- 16/3 ծածկագրով մրցույթի ֆինանսների նախարարությանկողմից հարցման պատասխանը:
Գնահատող հանձնաժողովի կողմիվ ուսումնասիրվեց ստացված փաստաթղթերը <ԴԻԱՎԱՆՏ>ՍՊԸ-ի և <Մեդտեխսերվիս > ՍՊԸ-ի ֆինանսական գործունեության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացության համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, երկրորդ տեղն զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ֆինանսների նախարարության կողմից հարցման պատասխանը դրական է: Տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակիցների ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը համապատասխանող:

Գնահատող հանձնաժողովի 2016 թվականի մարտի14-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, համաձյան որի՝

Գնման առարկա է հանդիսանում Դյուրակիր /սոնոգրաֆ/ ուլտրաձայնային հետազոտման սարքը

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/ | Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/ | Անհամապատասխանության համառոտ նկարագրություն . |
|---|---|---|---|---|
| 1 | <Մեդտեխսերվիս>ՍՊԸ | X | | |
| 2 | <ԴԻԱՎԱՆՏ>ՍՊԸ | X | | |